Մրցույթ՝ «Երևանի Գ. Մահարու անվան հ.176 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար), «Ֆիզկուլտուրա» (50 դասաժամ, որից 10 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար), «Պատմություն» (44 դասաժամ, որից 22 դասաժամ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար), «ՆԶՊ» (12 դասաժամ), «Մաթեմատիկա» (20 դասաժամ), «Աշխարհագրություն» (8 դասաժամ), «Մայրենի» (14 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար), առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
- հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա 2024թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 14:30-ին Երևանի Գ. Մահարու անվան հ.176 հիմնական դպրոցում: Հասցե՝ ք. Երևան, Հովնաթանի 33: Տեղեկությունների համար զանգահարել (010) 72-77-42 հեռախոսահամարով: